



L.A. Care.
Medi-Cal



Medi-Cal-ի 2025թ. տարեկան ուղեցույց
անդամների համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուղերձ L.A. Care-ից	1
Տեղեկություններ ստացեք Ձեր Medi-Cal ծրագրի մասին	2
Նպաստների հիմնական կետերը	6
Տեսողության խնամք	8
Խնամք ստանալու հավելյալ եղանակներ	9
COVID-19, գրիպի և ռեսպիրատոր-սինցիտիալ վիրուսի (Respiratory Syncytial Virus, RSV) կանխարգելում և խնամք	10
Իմացեք Ձեր խնամքի տարբերակները	12
Ձեզ հասանելի ռեսուրսները	14
Medi-Cal-ի թարմացում	20
Ինչպես օգտվել անդամների և վերաբերող նյութերից	23
Կարևոր հեռախոսահամարներ և Մնացեք կապի մեջ	24
Խտրականության բացառման ծանուցագիր	25
Լեզվական օգնություն	27



Հարգելի L.A. Care-ի Անդամ,

L.A. Care Health Plan-ը (L.A. Care) կիսում է Medi-Cal-ի նպաստների տեղեկությունների և ռեսուրսների այս տարեկան ուղեցույցը, որը կօգնի Ձեզ առողջ մնալ:

Այս տեղեկությունները Ձեզ ընդհանուր պատկերացում կտրամադրեն Medi-Cal-ի և դրա նպաստների ու ծառայությունների մասին՝ օգնելու Ձեզ խնամք ստանալ: Ծառայությունները հասանելի են Ձեզ ցածր գնով կամ անվճար: Նույնիսկ եթե հիվանդ չեք զգում, անպայման տարին առնվազն մեկ անգամ այցելեք Ձեր բժշկին:

Բացի այդ, Medi-Cal-ի թարմացումները դեռ շարունակվում են: Յուրաքանչյուր ոք թարմացման տարբեր ամսաթիվ ունի: Լուս Անջելես վարչաշրջանի Հանրային սոցիալական սպասարկման բաժնից (Department of Public Social Services, DPSS) Medi-Cal-ի թարմացման փաթեթ ստանալու դեպքում, կարևոր է, որ թարմացումն ավարտեք մինչև ձևաթղթում նշված վերջնաժամկետը:

Եթե այդպես չվարվեք, կարող եք կորցնել Medi-Cal-ի Ձեր ապահովագրությունը: Տեղեկությունները կարող եք DPSS-ին ներկայացնել առցանց՝ benefitscal.com կայքում, հեռախոսով՝ **1.866.613.3777** համարով, փոստով կամ անձամբ:

L.A. Care-ի և Medi-Cal-ի նպաստների և ծառայությունների մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք մեր կայքը՝ lacare.org կամ զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ **1.888.839.9909 (TTY 711)** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը:

Հարգանքներով,
L.A. Care Health Plan

Հավելյալ տեղեկություններ ստացեք Ձեր **MEDI-CAL** ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ



Medi-Cal

- Medi-Cal-ը Կալիֆորնիայի Medicaid առողջապահական խնամքի ծրագրի տարբերակն է:
- Medi-Cal-ն անվճար կամ ցածր գնով առողջապահական ապահովագրություն է տրամադրում Կալիֆորնիայի բնակիչներին՝ անկախ ներգաղթի կարգավիճակից, սահմանափակ եկամտով այն անձանց, ովքեր համապատասխանում են իրավունակության չափանիշներին, ներառյալ՝ եկամտի ուղեցույցները:

Medi-Cal-ի Կառավարվող խնամք և L.A. Care Health Plan

- Medi-Cal-ի Կառավարվող խնամքը կազմակերպված համակարգ է, որն օգնում է անդամներին ստանալ բարձրորակ խնամք և առողջ մնալ:
- Medi-Cal-ի Կառավարվող խնամքի առողջապահական ծրագրերն օգնում են անդամներին գտնել բժիշկներ, դեղատներ և առողջապահական կրթության ծրագրեր:
- Medi-Cal-ի Կառավարվող խնամքի առողջապահական ծրագրերը նաև առաջարկում են խնամքի համակարգում, ուղեգրեր մասնագետների մոտ, 24-ժամյա բուժքույրերի խորհրդատվություն հեռախոսային ծառայություններ և Անդամների սպասարկման աջակցություն, որոնք հասանելի են օրը 24 ժամ, շաբաթը 7 օր (ներառյալ տոն օրերը):

- L.A. Care Health Plan-ը Կալիֆորնիայի ամենամեծ Medi-Cal ծրագիրն է, որը առողջապահական խնամքի ապահովագրություն է տրամադրում Լոս Անջելես վարչաշրջանում բնակվող Medi-Cal-ի նպաստառուներին:
- L.A. Care Health Plan-ի հետ Դուք ստանում եք անհրաժեշտ օգնությունը՝ գտնելու ճիշտ բժշկին, դեղատոմսեր և առողջապահական կրթության ծրագրերը, որոնք օգտակար կլինեն Ձեր ընդհանուր առողջությանը:

Ձեր առաջնային խնամքի մատակարարը (PCP)

- Ձեր PCP-ն Ձեր հիմնական բժիշկը կամ կլինիկան է և առաջին անձը կամ վայրն է, որտեղ գնում եք, որպեսզի առողջ մնաք, երբ առողջական խնդիր ունեք:
- Ձեր PCP-ն երաշխավորում է, որ Դուք ստանաք ճիշտ խնամքը ճիշտ տեղում, ճիշտ ժամանակ:

Ինչպես փոխել Ձեր PCP-ին Ձեր PCP-ին կարող եք փոխել՝

- Զանգահարելով L.A. Care-ի Անդամների սպասարկման բաժին՝ **1.888.839.9909 (TTY 711)** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը
- Խնդրանք ներկայացնելով L.A. Care Connect-ի միջոցով՝ Ձեր անդամի առցանց հարթակի միջոցով՝ **members.lacare.org** կայքում:

Նախնական լիազորում մասնագիտացված խնամքի համար

- Ձեր PCP-ն կարող է ցանկանալ Ձեզ «մասնագետի» մոտ ուղեգրել կամ Medi-Cal-ի կողմից չապահովագրված դեղ նշանակել:
- Մասնագետը մարմնի մեկ մասի կամ որոշ տեսակի հիվանդության կամ ծառայության փորձագետ է: Օրինակներից են՝ սրտաբանները և վիրաբույժները:
- Եթե Ձեզ մասնագիտական խնամք կամ ծառայություն է հարկավոր, Ձեր PCP-ն պետք է հաստատում խնդրի, նախքան Ձեր գնալը: Այս խնդրանքը հայտնի է որպես «նախնական լիազորություն»:

L.A. Care-ի Ձեր անդամի նույնականացման (ID) քարտ

- Ձեր առողջապահական ծրագրի անվանումը՝ **L.A. Care Health Plan**
- Ձեր անդամի **նույնականացման (ID) համարը**:
- Ձեր **առաջնային խնամքի մատակարարը** (PCP) և նրա համարը:
- Ձեր **բժշկական խումբը** (եթե ունեք):
- L.A. Care-ի Անդամների սպասարկման բաժնի** հեռախոսահամարը և այլ կարևոր տեղեկություններ և հեռախոսահամարներ:

Ձեր նույնականացման (ID) քարտը միշտ պահեք Ձեզ մոտ: Միշտ հիշեք, որ առողջապահական խնամքի ծառայություններ ստանալիս պետք է ցույց տաք Ձեր անդամի նույնականացման (ID) քարտը:

Ձեր անդամի նույնականացման (ID) քարտը չստանալու կամ հարցեր ունենալու դեպքում, խնդրում ենք զանգահարել Անդամների սպասարկման բաժին՝ **1.888.839.9909 (TTY 711)** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը:



1

2

3

4

Name:

Member ID:

PCP/Clinic:

PCP/Clinic Phone:

Medical Group:

Effective Date:

This card is for identification purposes only and does not constitute proof of eligibility.

Առջև

5

Member Services:

Mental Health:

Substance Use Disorder Services:

24-Hour Nurse Advice Line:

Medi-Cal Rx:

1.888.839.9909 (TTY 711)

1.877.344.2858 (TTY 711)

1.844.804.7500 (TTY 711)

1.800.249.3619 (TTY 711)

1.800.977.2273 (TTY 711)

If you think you have a medical or psychiatric emergency, call 911 or go to the nearest hospital. Emergency services are covered by L.A. Care Health Plan without prior authorization at no cost.

Provider Information:

Pre-authorization is required for all non-emergency hospital admissions. Call 1.877.431.2273.

Emergency services rendered by non-contracted providers are reimbursable by L.A. Care Health Plan or its financially delegated entity and do not require prior authorization.

Հետև



Տեղեկություններ ստացեք վարքագծային առողջության Ձեզ հասանելի ծառայությունների մասին Զեր հոգեկան առողջությունը կարևոր է: Գիտե՞ի՞ք արդյոք, որ՝

- 5 չափահասից 1-ը որևէ պահի տագնապային խանգարումներ է ունենում
- ԱՄՆ չափահասների 8.8% -ն ապրում է մեծ դեպրեսիվ խանգարումներով
- Մեծ դեպրեսիվ խանգարում ունեցող երիտասարդների 60%-ն անհրաժեշտ խնամք չի ստանում¹

Օգտվեք Վարքագծային առողջության ծառայություններից, որոնք Ձեր նպատակների մաս են կազմում: Սա ներառում է և՛ հոգեկան առողջության, և՛ թմրանյութերի օգտագործման խանգարումների բուժում՝ ապահովելով, որ Դուք ստանում եք Ձեզ անհրաժեշտ աջակցությունը, երբ դրա կարիքն ունեք:

L.A. Care-ը այս ծառայությունները մատուցում է առաջնային խնամքի մատակարարների, Caredon Behavioral Health-ի Վարքագծային առողջության մասնագետների, Լոս Անջելես վարչաշրջանի Հոգեկան առողջության բաժնի (DMH) և Լոս Անջելես վարչաշրջանի Հանրային առողջության բաժնի (DPH) միջոցով:

Caredon Behavioral Health-ը L.A. Care-ին ծառայություններ առաջարկող է, որը մատակարարների ցանց ունի, որոնք հոգեկան առողջության ոչ-մասնագիտացված ծառայություններ (NSMHS) են առաջարկում L.A. Care Medi-Cal-ի անդամներին: Այս ծառայություններն անվճար տրամադրվում են Ձեզ: Բացի այդ, նշված ծառայությունները նախնական լիազորություն չեն պահանջում դյուրացնելով Ձեզ համար խնամքի մատչելիությունը:

¹ Հոգեկան առողջության ծառայություններ (2024թ.): Ընդհանուր հոգեկան առողջության տվյալներ. mhnational.org/menthealthfacts: 2024թ. հոկտեմբերի 9-ին մուտք է գործվել:

NSMHS-ի ծառայություններն ընդգրկում են՝

- Հոգեկան առողջության** գնահատում և բուժում, ներառյալ անհատական, խմբային և ընտանեկան հոգեբուժությունը:
- Հոգեբանական** և նյարդահոգեբանական ստուգում, երբ կլինիկական ցուցված է՝ հոգեկան առողջության վիճակը գնահատելու համար:
- Ամբուլատոր** ծառայություններ՝ դեղերով բուժմանը հետևելու նպատակով:
- Հոգեբուժական** խորհրդատվություն:
- Ամբուլատոր** լաբորատոր անալիզներ, դեղեր, պաշարներ և հավելումներ:

Caredon-ի մատակարար գտնելու համար կարող եք զանգահարել **1.877.344.2858 (TTY 1.800.735.2929)** հեռախոսահամարով կամ օգտագործել նրանց Առցանց մատակարարի որոնման հատկությունը՝ այցելելով plan.caredonbehavioralhealth.com/find-a-provider կայքը:

L.A. Care-ի անդամները, ովքեր պայքարում են հոգեկան առողջության լուրջ մարտահրավերների դեմ, կարող են օգնություն ստանալ DMH-ի միջոցով՝ Մասնագիտացված հոգեկան առողջության ծառայությունների (Specialty Mental Health Services, SMHS) համար:

SMHS-ը կարող է ներառել, բայց չսահմանափակվել անհատական և խմբային թերապիայով, դեղորայքային աջակցությամբ, գործի կառավարմամբ, ճգնաժամային միջամտությամբ, գործընկերների աջակցությամբ, հիվանդանոցային բուժմամբ և այլ վերականգնողական ծառայություններով:

Այս ծառայություններից օգտվելու համար զանգահարեք **1.800.854.7771** հեռախոսահամարով:


**ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵԿ
ՀԵՌԱԽՈՍԱԶԱՆԳՈՎ
ԿԱՐՈՂ ԵՔ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼ**

Եթե հաշիվ ստանաք Ձեր բժշկից, հրատապ խնամքի կենտրոնից, հիվանդանոցից կամ L.A. Care-ի կողմից մատուցվող այլ ծառայություններից՝

- Պետք է զանգահարեք L.A. Care-ի Անդամների սպասարկման բաժին՝ **1.888.839.9909 (TTY 711)** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը:
- Medi-Cal-ի ամբողջ նպաստներն ու ծառայություններն անդամներին մատուցվում են անվճար:
- Հնարավոր է, որ կարիք չունենաք վճարել:
- Դուք իրավունք ունեք զանգատ կամ բողոքի զեկույց ներկայացնել:

Եթե տեղափոխվում եք կամ կարիք ունեք թարմացնելու Ձեր կոնտակտային տվյալները, պետք է անեք հետևյալից մեկը.

- Զանգահարեք Լոս Անջելեսի Հանրային սոցիալական սպասարկման բաժնի (DPSS) Ձեր վարչաշրջանի իրավունակության հարցերով աշխատողին՝ **1.866.613.3777** | TTY **1.800.660.4026** հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, 7:30-ից 18:30 (բացառությամբ տոնական օրերի):
- Ստեղծեք կամ մուտք գործեք Ձեր BenefitsCal հաշիվը benefitscal.com կայքում՝ Ձեր տեղեկությունները թարմացնելու համար:
- Զանգահարեք L.A. Care-ի Անդամների սպասարկման բաժին՝ **1.888.839.9909 (TTY 711)** հեռախոսահամարով, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը:



Թմրանյութերի օգտագործման բուժմանն առնչվող աջակցության համար անդամները կարող են ուղղակիորեն կապ հաստատել Լոս Անջելես վարչաշրջանի Հանրային առողջության թմրանյութերի չարաշահման կանխարգելման և վերահսկման բաժնի (DPH SAPC) հետ՝ զանգահարելով **1.844.804.7500 (TTY 711)** հեռախոսահամարով:

L.A. CARE MEDI-CAL Նպաստների հիմնական կետերը

Ձեր նպաստների մասին հավելյալ
մանրամասներ կարող եք գտնել
Medi-Cal Անդամի տեղեկագրքում,
որը հասանելի է առցանց՝

lacare.org/members/documents/medi-cal:

* Սա ընդամենը ամփոփում է:

Ամբուլատոր և ընդհանուր նպաստներ և ծառայություններ

- Առաջնային խնամքի բժշկի և
մասնագետի այցեր
- Ամբուլատոր վիրահատություն
- Հրատապ խնամքի և մանրածախ
խանութների կլինիկաներ
- Լաբորատոր ծառայություններ և ռենտգեն
պատկերումներ
- Գրիպի սրսկումներ և այլ առաջարկվող
պատվաստումներ
- Կորոնավիրուսի (COVID-19) Ստուգում և
պատվաստում
- Մայրության և նորածնի խնամք
- Ծննդաբերության և հետծննդաբերական խնամք

Կանխարգելիչ և քաջառողջության նպաստներ

- Health in Motion™ ծրագիր
- Հիվանդությունների կառավարման ծրագրեր
- Ծխելը դադարեցնելու ծառայություններ
- Ընտանիքի պլանավորման
ծառայություններ
- Համայնքային առողջապահական
հարցերով աշխատողի ծառայություններ

L.A. Care
Health Plan-ը
առողջապահական
նպաստների
համապարփակ շարք է
տրամադրում:

**Ձեռք ԱՆՎՃԱՐ
ՏՐԱՄԱԴՐՎՈՂ
ՀԱՎԵԼՅԱԼ ՆՊԱՍՏՆԵՐ**

- Բուժքույրերի և մանկաբարձների
ծառայություններ
- Դուլայի ծառայություններ
- Մանկաբուժական ծառայություններ (Վաղ և
պարբերաբար զննում, ախտորոշում և բուժում
- Ուտաբուժություն
- Ոսկրահարդարում
- Բուժական թերապիաներ
- Դիալիզ/Հեմոդիալիզ
- Բուժքույրերի խորհրդատվական
հեռախոսագիծ
- Հեռաառողջապահություն
- Ընտանեկան թերապիա

Վարվեցողական առողջության ծառայություններ

- Հոգեկան առողջության ամբուլատոր
ծառայություններ
- Ամբուլատոր և ստացիոնար մասնագիտացված
հոգեկան առողջության ծառայություններ
- Թմրանյութի օգտագործման խանգարման
ամբուլատոր ծառայություններ/Ալկոհոլի
չարաշահման զննում
- Կամավոր ստացիոնար թունազերծում



Հիվանդանոցային ծառայություններ

- Ստացիոնար ծառայություններ
- Վիրաբուժական ծառայություններ
- Հիմնական օրգանների և հյուսվածքի
փոխպատվաստում
- Անեսթեզիոլոգի ծառայություններ



Արտակարգ իրավիճակի ծառայություններ

- Շտապ օգնության սենյակի
ծառայություններ
- Շտապօգնության մեքենայի
ծառայություններ



Դեղատան նպաստներ

- Դեղատոմսային դեղեր
(Medi-Cal Rx-ի միջոցով՝
medi-calrx.dhcs.ca.gov)



Վերականգնողական և հաբիլիտատիվ ծառայություններ

- Ֆիզիոթերապիա
- Աշխատանքային թերապիա
- Աուդիոլոգիա
- Լոգոպեդիա
- Լսողության ստուգումներ
- Տեսական օգտագործման բժշկական սարքեր
- Ասեղնաբուժություն
- Տնային առողջապահական ծառայություններ
- Օրթեզ/պրոթեզ
- Բժշկական պարագաներ, սարքավորումներ
և սարքեր
- Հմուտ բուժքույրական հաստատություն
(մինչև 90 օր)
- Թոքերի վերականգնում



Այլ ծառայություններ

- Տեսողություն/Օպտոմետրիա
- Ատամնաբուժական խնամք (Medi-Cal Dental-ի
միջոցով, որը պաշտոնապես հայտնի է որպես
Denti-Cal՝ dhcs.ca.gov/services)
- Փոխադրում
 - Ոչ-արտակարգ իրավիճակի բժշկական
փոխադրում
 - Պատգարակով միկրոավտոբուս
 - Անվասայլակի համար հարմար միկրոավտոբուս
 - Շտապօգնության մեքենա
 - Ոչ-բժշկական փոխադրում
 - Անձնական կամ հանրային փոխադրամիջոց
այն անձանց համար, ովքեր չունեն այլ միջոց
իրենց ժամադրությանը հասնելու համար
- Երկարաժամկետ ծառայություններ և
աջակցություն
 - Հմուտ բուժքույրական հաստատություններ
(91+ օր)
 - Տնային և Համայնքահեն ծառայություններ
 - Համայնքային աջակցություններ
 - Բարելավված խնամքի կառավարում
 - Փողոցի բժշկություն՝ նախատեսված անտունների
համար

* Նպաստները ենթակա են փոփոխման: Զանգահարեք
L.A. Care-ի Անդամների սպասարկման բաժին՝
1.888.839.9909 (TTY 711) հեռախոսահամարով, որը
24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոնական օրերը,
հավելյալ տեղեկությունների համար այցելեք lacare.org:
Ձեր առողջապահական խնամքի մատակարարը
կարող է որոշ նպաստների և ծառայությունների համար
թույլտվություն տալ: Կարիք ունենալ:

Առողջ պահեք Ձեր աչքերը **VSP VISION CARE-ի ՀԵՏ**

Մենք Ձեր աչքի առողջությունը դարձնում ենք մեր գլխավոր առաջնահերթությունը: Որպես Vision Care-ի անդամ, Դուք խնամքի մատչելիություն կունենաք հետևյալից՝ աչքի հայտնի բժշկներ, որակյալ ակնոցներ, ներառյալ՝ դեղատոմսով ոսպնյակները և շրջանակները, ինչպես նաև աչքերի մատչելի խնամք, որպեսզի կարողանաք հստակ տեսնել և ապրել առողջ կյանքով:

ԱՋԲԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ ԵՆ

VSP®-ով Դուք հրաշալի խնամք կստանաք VSP ցանցի բժշկից, ներառյալ՝ WellVision Exam®-ը, որն ստուգում է՝ նախատեսված տեսողության և առողջական խնդիրների նշաններ գտնելու համար, ինչպես օրինակ՝ շաքարախտը և արյան բարձր ճնշումը:



**ՀԱՐՑԵ՞Ր
ՈՒՆԵՔ:**

Ձեր VSP նպաստից օգտվելը հեշտ է



Ուսումնասիրեք Ձեր ապահովագրությունը

Վերանայեք Ձեր անհատականացված ապահովագրության մանրամասները և գտեք ներցանցային բժիշկ՝ հաշիվ ստեղծելով vsp.com-ում՝ օգտագործելով Ձեր L.A. Care Health Plan-ի նույնականացման (ID) համարը (նշված Ձեր քարտի վրա):



Այցելեք ներցանցային բժշկի

Մուտք գործեք Ձեր հաշիվ vsp.com կայքում՝ Ձեզ մոտ գտնվող Medi-Cal-ի VSP Մասնակից մատակարար գտնելու համար կամ զանգահարեք VSP Անդամների սպասարկման բաժին **1.800.877.7195 (TTY 711)** հեռախոսահամարով, երկուշաբթիից չաբաթ, 6:00-ից 17:00, խաղաղօվկիանոսյան ստանդարտ ժամանակով (կիրակի օրերին փակ է):



Ձեր ժամադրությանը նրանց ասացեք, որ VSP ունեք L.A. Care Health Plan-ի միջոցով: Ցույց տվեք L.A. Care Health Plan-ի Ձեր քարտը Ձեր ժամադրությանը:

Այսբա՛նը: Մենք կլուծենք մնացածը. հայցի ձևաթղթեր չկան, որոնք պետք է լրացնել, երբ այցելեք VSP Մասնակից մատակարարի:

Այցելեք vsp.com կամ զանգահարեք VSP՝ **1.800.877.7195 (TTY 711)** հեռախոսահամարով, երկուշաբթիից չաբաթ, 6:00-ից 17:00, խաղաղօվկիանոսյան ստանդարտ ժամանակով (կիրակի օրերին փակ է):



Լրացուցիչ միջոցներ **ԽՆԱՄՔ ՍՏԱՆԱԼՈՒ ՔԱՄԱՐ**

Երբ չեք կարող կապվել Ձեր PCP-ին, Teladoc-ի և Minute Clinic-ի մեր գործընկերների հետ հեշտությամբ խնամք ձեռք բերեք:

ԻՆՉՊԵՍ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ



1

Ստեղծեք Ձեր հաշիվը Teladoc.com կայքում: Ձեզ անհրաժեշտ կլինի Ձեր անդամի նույնականացման (ID) համարը:

2

Ցանկացած պահի վիրտուալ այց խնդրեք Teladoc-ի հեռախոսագանգի կենտրոնի, անդամների կայքի կամ բջջային հավելվածի միջոցով:

3

Օգտվեք խնամքից, որն անհրաժեշտ է, ուղղակիորեն հեռախոսով կամ տեսագանգով 24/7 հիմքով:



Հավելյալ տեղեկությունների համար՝
lacare.org/teladoc

ԻՆՉՊԵՍ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ



1

Օգտագործեք

L.A. Care-ի ացանց մատակարարների հասցեագիրքը՝ Ձեզ մոտ գտնվող Minute Clinic գտնելու համար:

2

Ուսումնասիրեք

սպասման ժամկետները և պլանավորեք Ձեր այցը Minute Clinic-ի կայքում:

3

Խնամք ստացեք Minute Clinic-ում: Ձեզ անհրաժեշտ կլինի Ձեր անդամի նույնականացման (ID) համարը և նույնականացման ձևաթուղթ:



Հավելյալ տեղեկությունների համար՝

lacare.org/minuteclinik

Հարցե՛ր ունեք: Զանգահարեք L.A. Care՝ **1.888.839.9909 (TTY 711)**



COVID-19-ի, գրիպի և ռեսպիրատոր-սինցիտիալ վիրուսի (RSV)



ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ և ԽՆԱՄՔ

COVID-19-ը, գրիպը և RSV-ը բոլորը շատ վարակիչ վիրուսներ են: Այս վիրուսները տարածվում են անձից անձ և կարող են լուրջ հիվանդություն առաջացնել, ինչպես օրինակ՝ թոքերի վարակ, երկարատև COVID, հոսպիտալացում և մահ:

Հանրային առողջապահական բոլոր գործակալությունները և L.A. Care-ն առաջարկում են, որ իրավունակ բոլոր անձինք ստանան Covid-19-ի, գրիպի և RSV-ի դեմ պատվաստումներ և/կամ խթանիչներ:



Իրավասություն

COVID-19-ի և գրիպի դեմ պատվաստումները հասանելի են վեց ամսական և ավելի բարձր տարիքի բոլոր անձանց համար: RSV-ի դեմ պատվաստանյութն այժմ հասանելի է շատ փոքր երեխաների, հղիների և իրավունակ ավելի տարեց չափահասների համար:

Պատվաստվելն ինքներդ Ձեզ և Ձեր սիրելիներին պաշտպանելու լավագույն միջոցներից է:



Մուտք

COVID-19-ի և գրիպի դեմ սրսկումները հասանելի են դեղատների մեծ մասում և Ձեր Առաջնային խնամքի մատակարարի (PCP) ընդունարանում կամ այցելեք lacare.org/flu՝ համայնքում գրիպի դեմ անվճար սրսկումներ գտնելու համար:

RSV-ի դեմ պատվաստանյութը հիմնականում հասանելի է նորածինների և փոքր երեխաների համար, ուստի Դուք պետք է ճշտեք Ձեր PCP-ի հետ՝ պարզելու, թե արդյոք RSV պատվաստանյութը հասանելի է և արդյոք Դուք համապատասխանում եք դրան:

Տարեց չափահասների և հղիների համար RSV պատվաստանյութը կարող է ապահովագրվել Medi-Cal Rx-ի կողմից դեղատանը՝ առանց նախնական լիազորության: Դեղատան ապահովագրության մասին ամենաթարմ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել medi-calrx.dhcs.ca.gov կայքը:



Արժեք

Ոչ մի ծախս չկա L.A. Care Medi-Cal-ի իրավունակ անդամների համար՝ COVID-19 ստանալու, ինչպես նաև գրիպի և RSV-ի դեմ պատվաստումներ կամ դեղեր ստանալու համար:



Կողմնակի ազդեցություններ

Պատվաստանյութերը Ձեզ չեն վարակում վիրուսով: Այս պատվաստանյութերի ընդհանուր կողմնակի ազդեցությունները կլինիկական փորձարկումներում ներառել են ցավ ներարկման տեղում, հոգնածություն, գլխացավ, մկանների և հոդերի ցավ, դող և մեղմ ջերմություն:

Կողմնակի ազդեցությունները հիմնականում մեղմ են և անհետանում են մեկ կամ երկու օրից, մինչդեռ պատվաստումների օգուտը մնում է:



Պաշտպանված մնացեք

- :: Հազալիս կամ փռտալիս բերանն անձեռոցիկով ծածկեք և փռտացեք Ձեր արմունկում:
- :: Հաճախակի լվացեք ձեռքերը օճառով:
- :: Մի գնացեք աշխատանքի կամ դպրոց, երբ հիվանդ եք և մինչև ախտանշանները բարելավվեն:
- :: Անհրաժեշտության դեպքում դիմակ կրեք:



Բուժվեք

Եթե COVID-19-ի կամ գրիպի ստուգման դրական արդյունք ունեք, կարող եք Ձեր PCP-ից խնդրել, որպեսզի դեղեր նշանակի այս վարակները բուժելու համար: Այս դեղերը կարող են սահմանափակել վարակի տևողությունն ու ծանրությունը և նվազեցնել ծանր հիվանդության հավանական վտանգը:



COVID-19-ի, գրիպի կամ RSV-ի վերաբերյալ հարցեր ունե՞ք:

Եթե հարցեր ունեք այս պատվաստումների մասին կամ եթե ուզում եք հավելյալ տեղեկություններ ստանալ առկա դեղերի մասին, խնդրում ենք խոսել Ձեր PCP-ի հետ կամ այցելել lacare.org/vaccine կայքը:

RSV-ի մասին հավելյալ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել Հանրային առողջության բաժնի սուր վարակիչ հիվանդությունների կառավարման բաժին (lacounty.gov)



Ստացեք COVID-19-ի և գրիպի դեմ ԱՆՎՃԱՐ պատվաստումն այսօր

Ձեր PCP-ի հետ կապվեք ժամադրություն պլանավորելու կամ տեղական դեղատուն այցելելու համար: Ցույց տվեք նրանց Ձեր L.A. Care-ի նույնականացման քարտը և ստացեք Ձեր անվճար սրսկումը գրիպի դեմ: Որևէ այլ օգնության կարիք ունենալու դեպքում կապ հաստատեք մեր Անդամների սպասարկման բաժնի հետ **1.888.839.9909 (TTY 711)** հեռախոսահամարով:



Հավելյալ
տեղեկությունների
համար՝
lacare.org/vaccine

Իմացեք Ձեր ԽՆԱՄՔԻ ԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ

Խնամքի տեսակներ	Ախտանիշների և ծառայությունների օրինակներ	Ինչպես ձեռք բերել	Սպասման մոտավոր ժամերը
 Բուժքույրերի խորհրդատվական հեռախոսագիծ Խոսեք արտոնագրված գրանցված բուժքրոջ հետ 24/7 հիմքով:	- Ինքնախնամքի խորհուրդներ - Առողջության վերաբերյալ հարցերի պատասխաններ - Որոշել, թե որտեղ ստանալ խնամքը	1.800.249.3619 (TTY 711)	Սպասման ժամանակ չկա
 Առաջնային խնամք Նախ զանգահարեք Ձեր Առաջնային խնամքի մատակարարին, երբ խնամքի կարիք ունեք:	- Կանխարգելիչ խնամք - Հանկարծահաս կամ կարճատև առողջական խնդիրներ - Երկարատև առողջական խնդիրներ կամ հիվանդություններ, ինչպիսին է շաքարախտը	- Զանգահարեք Ձեր PCP-ի հեռախոսահամարով, որը նշված է Ձեր նույնականացման (ID) քարտի վրա: - Այցելեք L.A. Care-ի Մատակարարների առցանց հասցեագիրքը lacare.org կայքում	10 կամ նվազ աշխատանքային օր - Մի քանի նույնօրյա ժամադրություններ
 Վիրտուալ խնամք Մուտք գործեք հեռաառողջապահության ծառայություններ և բժշկի հետ խոսեք հեռախոսով կամ առցանց:	- Մրսածություն/գրիպ/տենդ - Ցան - Վարակներ (մաշկ/աչք/ականջ/միզուղիների վարակ (UTI)) - Շնչառական (խզխզոց/հագ) - Ստամոքսային (ցավ/փսխում/փորլուծություն) - Մանր վնասվածքները	- Այցելեք Teladoc™ (Պահանջվում է մուտք գործել/գրանցվել) member.teladoc.com/lacare կայքում - Teladoc™ 1.469.643.2161	Բոլորներից ժամեր
 Շտապ օգնության խնամք Շտապ օգնության կայանի խնամք կյանքին վտանգ սպառնացող վիճակների համար: ER կայանից մի օգտվեք սովորական խնամքի կամ թեթև հիվանդության համար:	- Կրծքավանդակի ցավ - Տեսողության հանկարծակի փոփոխություններ - Թուլություն/խոսելու դժվարություն - Սեփական անձին վնասելու մտքեր կամ հոգեկան առողջության որևէ այլ արտակարգ իրավիճակ	Զանգահարեք 911 կամ գնացեք ամենամոտ հիվանդանոցի շտապ օգնության կայան	Սպասման ժամերը կարող են տարբեր լինել՝ կախված Ձեր վիճակի ծանրությունից, հիվանդների քանակից և բուժման սենյակների մատչելիությունից:



Ծախսերի կամ այս ծառայություններից օգտվելու կերպի մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք lacare.org/members/getting-care կամ զանգահարեք Ձեր Անդամի նույնականացման (ID) քարտի հետևի կողմում նշված համարով: Եթե Ձեզ անհրաժեշտ է լրացուցիչ օգնություն, դիմեք L.A. Care Անդամների սպասարկման բաժին՝ **1.888.839.9909 (TTY 711)**, օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, ներառյալ տոն օրերը:

Խնամքի տեսակներ	Ախտանիշների և ծառայությունների օրինակներ	Ինչպես ձեռք բերել	Սպասման մոտավոր ժամերը
 Հրատապ խնամք Մանրածախս խանութների կլինիկաներ, որոնք տեղակայված են մանրածախս դեղատանը և անձնակազմում առաջնային խնամք տրամադրող բուժքույր ունեն	- Մրսածություն/գրիպ/տենդ - Ցան - Վարակներ (մաշկ/աչք/ականջ/միզուղիների վարակ (UTI)) - Շնչառական (խզխզոց/հագ) - Ստամոքսային (ցավ/փսխում/փորլուծություն) - Մանր վնասվածքները	- Այցելեք CVS MinuteClinic-ի տեղանքներից մեկը - Մանրածախս խանութների կլինիկաների ցանկի համար այցելեք L.A. Care-ի առցանց Մատակարարների հասցեագիրքը:	- Բոլորներից ժամեր - Այց պլանավորեք և առցանց ստուգեք առանց ժամադրության սպասման մոտավոր ժամերը
 Հրատապ խնամքի կենտրոն Բժիշկներից ստացեք նույնօրյա խնամք, նույնիսկ աշխատանքային ժամերից հետո և շաբաթավերջերին:		- Այցելեք L.A. Care-ի Մատակարարների առցանց հասցեագիրքը lacare.org կայքում - Զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 1.888.839.9909 (TTY 711) հեռախոսահամարով	Բոլորներից ժամեր
 Վարքագծային առողջության ծառայություններ Վարքագծային առողջության մատակարարներից օգտվեք հետևյալի միջոցով.	- Անհույս լինելու կամ գերհոգնածության զգացումներ - Չափազանցված զայրույթ, անհանգստություն, ջղագրգռություն և տրամադրության այլ փոփոխություններ - Քուն, ախորժակ կամ էներգիայի մակարդակի փոփոխություններ		
 Carelon Behavioral Health	- Հոգեկան առողջության սկզբնական գնահատում (նախնական լիազորության կարիք չկա) - Անհատական, խմբային կամ ընտանեկան թերապիա - Հոգեբանական և նյարդաբանական ստուգում - Ջննդամեր և կարճատև միջամտություններ - Ամբուլատոր հսկողություն դեղերով բուժման համար	Carelon Behavioral Health 1.877.344.2858 TTY/TTD 1.800.735.2929	
 LA վարչաշրջանի Հոգեկան առողջության բաժին (DMH)	- Անհատական թերապիա - Դեղերի աջակցություն - Ճգնաժամային միջամտություն և կայունացում - Նպատակային գործի կառավարում - Ցերեկային բուժում և ցերեկային վերականգնում - Բնակարանային բուժում - Սուր հոգեբուժական ստացիոնար հոգեբուժական խնամք*	DMH ACCESS-ի և թմրանյութերի օգտագործման ծառայության թեժ գիծ՝ 1.800.854.7771	- Ոչ-հրատապ խնամք. - Հոգեկան առողջության ժամադրություն 10 աշխատանքային օր - Մասնագիտացված խնամքի բժիշկ 15 աշխատանքային օր
 LA վարչաշրջանի Հանրային առողջության բաժին (DPH) Հոգեմետ դեղերի չարաշահման կանխարգելում և վերահսկողություն (SAPC)	Թմրանյութերի օգտագործման բուժում, ինչպես օրինակ՝ ամբուլատոր և բնակության վայրի ծառայություններ	Թմրանյութերի չարաշահման ծառայությունների թեժ գիծ՝ 1.844.804.7500	



Անդամների նյութերի կայքէջ

Կարող եք վերանայել Ձեր անդամի կարևոր փաստաթղթերը հետևյալ կայքում՝
lacare.org/members/documents/medi-cal:

Այստեղ կարող եք գտնել հետևյալ կարևոր տեղեկությունները և ռեսուրսները, որոնք կօգնեն Ձեզ ստանալ անհրաժեշտ խնամքը.

- Medi-Cal-ի Անդամի տեղեկագիրք
- Նոր անդամի բարի գալստի ուղեցույց
- Անդամի տարեկան ուղեցույց
- Մատակարարների հասցեագիրք
- Medi-Cal-ի նույնականացման (ID) քարտ
- Medi-Cal Rx
- Medi-Cal երեխաների և դեռահասների համար, գրքույկ և նամակ

Medi-Cal-ի անդամների նյութերը տարեկան թարմացվում և տեղադրվում են կայքում:

Յուրաքանչյուր տարի Դուք կստանաք Տարեկան փոստային ուղեցույցի տպագիր պատճենը, սակայն անդամի տեղեկագիրքը հասանելի կլինի միայն էլեկտրոնային ձևով՝ առցանց:

Անդամի տեղեկագրի տպագիր պատճենը չի ուղարկվի փոստով, եթե այն չի ներկայացվել:

Էլեկտրոնային ձևաչափով կարող եք նաև մուտք ունենալ հետևյալ նյութերին ու աղբյուրներին.

- Համայնքային աջակցություններ.
lacare.org/members/community-supports
- Medi-Cal-ի Անդամի երկարաձգման էջ՝
lacare.org/health-plans/medi-cal/reewals
- Մատակարարների հասցեագիրք՝
lacare.org/members/documents/medi-cal
- Դեղատան դեղերի դեղացանկ (Medi-Cal Rx-ի միջոցով)՝ lacare.org/members/getting-care/pharmacy-services
- Medi-Cal երեխաների և դեռահասների համար, գրքույկներ/նամականեր՝
lacare.org/members/getting-care/routine-exams
- Վարքագծային առողջության մատակարարի որոնում Caelon Behavioral Health-ի միջոցով
plan.caelonbehavioralhealth.com/find-a-provider



L.A. Care Connect-ը և My Health in Motion™-ը

L.A. Care Connect

Ձեր փորձառությունը դյուրացնելու համար կարող եք ստեղծել L.A. Care Connect-ի անդամի առցանց հաշիվ՝ տեղեկատվության և ծառայությունների համար: L.A. Care connect-ը Ձեր անդամի առցանց հարթակն է:

- Առցանց հաշիվ ստեղծել՝ այցելելով members.lacare.org կայքը կամ սեղմելով անդամի նշանը՝ lacare.org կայքէջի վերին աջակողմյան կոճակի վրա:
- Ձեզ անհրաժեշտ է Ձեր անդամի նույնականացման (ID) համարը և վավեր էլիտստի հասցե՝ հաշիվ ստեղծելու համար (Ձեր անդամի նույնականացման (ID) համարը Ձեր անդամի նույնականացման (ID) քարտի վրա է):
- Քայլ առ քայլ **գրանցման ուղեցույցից** օգտվելու համար խնդրում ենք այցելել members.lacare.org կայքը:

Ձեր L.A. Care Connect հաշվի միջոցով կարող եք՝

- **Տպել կամ դիտել** Ձեր անդամի նույնականացման (ID) քարտը, որը կարող եք օգտագործել Ձեր բժշկի ընդունարանում կամ դեղատանը
- **Դիտել** Ձեր առողջական խնամքին վերաբերող տեղեկությունները, ներառյալ՝ իրավունակությունը
- **Խնդրել** փոխել Ձեր PCP-ին
- **Ձրուցել** իրական ժամանակում բուժքրոջ հետ՝ Ձեզ հարմար ժամանակ
- **Ավելի շատ օգտվել 24/7 ծառայություններից.** բժիշկ գտնել, որոնք մատակարարների հասցեագիրքը կամ կապվել մեզ հետ, և այս ամենը՝ մեկ կոճակ սեղմելով
- **Կապվել My Health in Motion™-ի հետ՝** Ձեր առողջական կարիքներին համապատասխան ծրագրեր գտնելու համար

L.A. Care-ը 2025 թ. գործարկում է անդամների բարելավված հարթակ՝ Ձեր առողջապահական խնամքի կառավարումն ավելի քան երբևէ դյուրացնելու համար:

Տեղեկացված մնացե՛ք նոր հատկությունների թարմացումների համար, որոնք նախատեսված են Ձեզ արագ և հարմար մուտք տրամադրել օգտվելու հետևյալից.

- Ձեր առաջնային խնամքի **բժշկին**, կլինիկական կամ բժշկական խումբը փոխելը
- **Մատչելիություն** Ձեր ծրագրի նպաստներին
- **Ձեր** Առողջական վտանգի գնահատման ձևաթղթի լրացում, դիտում և թարմացում
- **Լիազորման** կարգավիճակների դիտում իրական ժամանակում L.A. Care-ի լիազորությունների համար
- **Ձեր** ժողովրդագրական **տվյալների** դիտում և թարմացում

My Health In Motion™

Վերահսկե՛ք Ձեր առողջությունը և լավագույնը զգացե՛ք My Health In Motion™-ի (MyHIM) առցանց քաջառողջության ամբողջությամբ նոր հարթակի հետ:

Բացահայտե՛ք հետևյալ առանձնահատկությունները MyHIM-ի նոր կայքում՝

- **Թարմ և հեշտ.** Փորձե՛ք նոր տեսքը՝ զվարճալի և պարզ հատկություններով:
- **Բարեկեցության գնահատում՝** Առողջապահական արագ ստուգում անցե՛ք և ստացե՛ք Ձեր սեփական հաշվետվությունը:
- **Ինտերակտիվ աշխատանքային պարապմունքներ.** Ուսումնասիրե՛ք առցանց առողջապահական դասընթացների մասնակցելու տարբերակները:
- **Սարքի կապակցում.** Միացե՛ք առողջապահական հետադիշների, ինչպիսին է Fitbit-ը՝ սահուն փորձառության համար:
- **Փորձագետի կողմից առողջապահական քույշինգ.** Օգնություն ստացե՛ք մեր առողջապահական քույշինգի ծրագրից:
- **Տեղեկատվություն, որը հասանելի է Ձեզ մատի մեկ հպումով.** Բացահայտե՛ք առողջապահական տեղեկություններով լի գրադարանը:

MyHIM-ից օգտվե՛ք ցանկացած ժամանակ, ցանկացած վայրում՝ համակարգչով, հեռախոսով, L.A. Care-ի Համայնքային աղբյուրների կենտրոններից և նույնիսկ Հանրային գրադարանից:

Պատրաստ եք՝ սկսելու համար.

1. Անցե՛ք lacare.org և սեղմե՛ք **«Member Sign-In» (Անդամի մուտք)**
2. Սեղմե՛ք **«My Health In Motion™»** ներդիրին և ստեղծե՛ք Ձեր հատկագիրը



Եթե օգնության կարիք ունե՛ք մեր առողջապահական օգնականները հասանելի են **1.855.856.6943** հեռախոսահամարով:

Ձեզ հասանելի ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Հավելյալ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Համայնքային ռեսուրս կենտրոններ

L.A. Care-ի Համայնքային ռեսուրս կենտրոնները (Community Resource Centers, CRCs) գործում են Blue Shield of California Promise Health Plan-ի հետ համատեղ և առաջարկում են առողջությանը և քաջառողջությանը առնչվող բազմաթիվ անվճար ծառայություններ և ռեսուրսներ, որոնք հարմարեցված են անդամներին և համայնքին:

Առաջարկվող ծառայությունները ներառում են.

- Առողջության և քաջառողջության անվճար դասընթացներ մեծահասակների և երեխաների համար՝ օգնելու կառավարել քրոնիկական առողջական խնդիրները
- Անվճար WiFi հեռաառողջապահական ծառայությունների համար
- CalFresh-ում անդամագրման օգնություն
- Medi-Cal-ի անդամագրման և թարմացման աջակցություն
- Սոցիալական ծառայությունների օգնություն
- Կապակցում և ուղեգրեր տեղական համայնքային ռեսուրսների համար

CRC-Ի ԲՈՒՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՎՃԱՐ ԵՆ և ՀԱՍԱՆԵԼԻ ԵՆ ՁԵՋ և ՀԱՄԱՅՆՔԻ ՑԱՆԿԱՑԱԾ ԱՆՁԻ ՀԱՄԱՐ

- Առողջության զննումներ, սննդի օգնություն և համայնքային միջոցառումներ ողջ տարվա ընթացքում

Անցում կատարեք communityresourcecenterla.org կայքը՝ CRC-ի գտնվելու վայրի/հասցեների, հեռախոսահամարների, աշխատանքային ժամերի և միջոցառումների օրացույցների համար:

Ժամադրություն կարող եք նշանակել՝ այցելելով communityresources.centerla.org կայքը և օգտագործելով ժամադրություն նմանակման առցանց գործիքը կամ զանգահարելով **1.877.287.6290 (TTY 711)** հեռախոսահամարով:

